ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԵՆԹԱՏԵՍԱԿ*

ՆԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱրՊՀ իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Նվիրատվության և նվիրաբերության ինստիտուտները կարևոր տեղ են զբաղեցնում ժամանակակից քաղաքացիական շրջանառության մեջ և հանդիսանում են որպես բավականին տարածված քաղաքացիաիրավական գործարք: Ինչպես ցանկացած իրավական երևույթ, նվիրատվությունն ու նվիրաբերությունը ևս ունեն իրենց իրավական էությունը, որոշակի հատկություններն ու առանձնահատկությունները: Նվիրատվությունը քաղաքացիական իրավունքի ամենահին պայմանագրերից մեկն է: Մ.թ.ա. V-I դարերում, հռոմեական իրավունքում նվիրատվությունը համարվում էր որպես սեփականության իրավունքի ծագման հիմք:

Մեր երկրում տեղի ունեցած սոցիալական և տնտեսական արմատական փոփոխությունները մեծ չափով անդրադարձ են կատարել քաղաքացիաիրավական հարաբերություններին: Անցումը դեպի շուկայական տնտեսություն՝ կտրուկ մեծացրել է այն պայմանագրի դերը, որը մեծամասամբ հանդիսանում է կողմերի փոխհարաբերությունների միակ կարգավորողը քաղաքացիական շրջանառության մեջ:

Նվիրատվություն պայմանագիրը ևս իր ուրույն տեղն ունի այն պայմանագրերի շարքում, որոնք ուղղված են գույքն ի սեփականություն փոխանցելուն: Ներկայումս նպատակային զարգացում է նկատվում նվիրաբերության պայմանագրի՝ որպես գույքային հարաբերությունների ձևակերպման միջոցի կիրառման ուղղությամբ:

Հաշվի առնելով սոցիալ - տնտեսական հարաբերությունների զարգացման նոր միտումները՝ գործող քաղաքացիական օրենսգիրքն առավել մանրամասն կարգավորում է հանրօգուտ նպատակներով գույքի անհատույց փոխանցման հարաբերությունները՝ կարևորելով նվիրաբերության պայմանագիրը որպես ինքնուրույն գործարքի ձև:

1964թ. ընդունված ԽՍՀՄ Քաղաքացիական օրենսգրքով նվիրաբերությունը համարվում էր որպես առանձնահատուկ նշանակության նվեր, որն ուներ համընդհանուր օգտակար նպատակ: Ներկայումս գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով նվիրաբերություն է ճանաչվում հանրօգուտ նպատակներով գույքի կամ իրավունքի նվիրատվությունը: Նվիրաբերությունն ընդունելու համար որևէ մեկի թույլտվություն կամ համաձայնություն չի պահանջվում:

Ինչո՞վ է տարբերվում նվիրաբերությունը նվիրատվությունից: ՀՀ քաղաքացիական իրավունքում, օրինակ, դա անվանվում է նվիրատվության պայմանագրի ենթատեսակ, ինչը ամենաճիշտ բնորոշումն է: [1] Նվիրաբերության տեսակ է

---

* Հոդվածն ընդունվել է 01.12.2012:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ իրավունքի ամբիոնի ավագ դասախոս ի.գ.թ., Ա. Թադևոսյանը:

գումար հատկացնելը, ինչպես, օրինակ, բյուջետային համակարգի մասին օրենքի դրույթների համաձայն՝ կառավարության պահուստային ֆոնդից որևէ տոնակատարության կապակցությամբ պետական կամ հասարակական կառույցին գումար հատկացնելը: Այս դեպքում հատկացումը նվիրաբերություն է և նույնպես պարունակում է նպատակային օգտագործման պահանջ:

Հարկ է տարբերել նվիրաբերությունը հովանավորությունից: Հովանավորություն է համարվում որևէ զանգվածային բնույթի միջոցառման համար համապատասխան ծախսեր կատարելը, որի ժամանակ օգտագործվում է պաստառների ցուցադրման, տեսաձայնային հոլովակների մատուցման և այլ ձևերով հովանավորի մասին գովազդը: Հովանավորությունն, այսպիսով, գովազդման դիմաց յուրօրինակ վճար է, որը չի պահանջում կողմերի միջև փոխադարձ պարտավորություններ, այդ պատճառով էլ հովանավորությունը չի համարվում նվիրաբերության տարատեսակ:

Նույնը, սակայն, չի կարելի ասել հանգանակության վերաբերյալ: Ընդ որում, եթե հանգանակությունը նախատեսում է միայն դրամական հատկացումներ, ապա նվիրաբերության դեպքում այն կարող է լինել նաև գույքի ձևով, ինչպես օրինակ՝ մեքենաներն ու սարքավորումները: Հանգանակության խոստումը նույնպես համարվում է նվիրաբերության ձև: Դա հաճախ դրսևորվում է հիմնադրամների կազմակերպած ակցիաների ժամանակ: Օրինակ՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնները ու թելեթոնները: Հիմնադրամների միջոցով կամ առանց դրանց՝ անհատ քաղաքացիների նախաձեռնությամբ իրականացվող բարեգործական գործունեությունը նվիրաբերությունից տարբերվում է նրանով, որ բարեգործությունն ուղղված է քաղաքացիներին և ոչ առևտրային կազմակերպություններին, իսկ նվիրաբերությունը՝ քաղաքացիներին, իրավաբանական անձանց, պետությանը և համայնքներին: Բարեգործական գործունեության առարկա են գույքը և դրամական միջոցները, իսկ նվիրաբերության պայմանագրի առարկա են հանդիսանում գույքը, գույքային իրավունքները:

Օրենսդրությունը չի նախատեսում նվիրաբերվող առարկայի վերաբերյալ նվիրատուի կողմից ներկայացվող որևէ երաշխիք: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունքում, մասնավորապես, նշվում է, որ նվիրաբերության պայմանագրի առարկայի շրջանակն ավելի նեղ է նվիրատվությունից:[2] Միևնույն ժամանակ, նվիրաբերության պայմանագիրը որպես նվիրատվության ենթատեսակ առանձնանում է նրանով, որ ունի հանրային օգտակարության նպատակ: Նվիրաբերության պայմանագրով գործարքը կարող է կատարվել ինչպես նվիրաբերված առարկայի անմիջապես փոխանցման, այնպես էլ դրա խոստման ձևով: Քանի որ նվիրատվության պայմանագրի առարկա են ճանաչվում ոչ միայն գույքի, այլև գույքային իրավունքի փոխանցումը, ուստի նվիրաբերությունը չի կարող իրականացվել նվիրառուին գույքային պարտականություններից ազատելու միջոցով: Ավելին՝ նվիրաբերությունը պահանջում է որոշակի նպատակով օգտագործում՝ առանց որևէ մեկի համաձայնության կամ թույլտվության, և այս հանգամանքը, կարծում ենք, թույլ է տալիս պնդել, որ նվիրաբերված առարկան պետք է նաև համապատասխան երաշխիք ունենա, որ-

պեսզի այդ գույքի հետագա օգտագործման ընթացքում չծագեն այնպիսի վիճակներ, որոնք կարող են հանգեցնել օրենսգրքի 605-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի պահանջներին: Իսկ ի՞նչ պահանջներ են դրանք: Համաձայն հիշյալ հոդվածի 5-րդ կետի. «Եթե իրադրության փոփոխման հետևանքով նվիրաբերված գույքի օգտագործումը նվիրաբերողի սահմանած նպատակին համապատասխան դառնում է անհնար, այն կարող է օգտագործվել այլ նպատակով միայն նվիրաբերողի համաձայնությամբ, իսկ նվիրաբերող քաղաքացու մահվան կամ իրավաբանական անձի լուծարման դեպքում՝ դատարանի վճռով»:[3] Չի բացառվում, որ սահմանված նպատակին անհամապատասխանությունը ունենա նաև տեխնիկական պատճառ, որն ի հայտ է եկել հետագայում և որը պետք է նկատի առնվեր նվիրատուի կողմից: Մինչդեռ այս նորմը նվիրաբերության պայմանագրով չի սահմանվում:

Հաջորդ՝ 6-րդ կետում, նշվում է, որ եթե նվիրառուն տվյալ գույքն օգտագործել է նվիրաբերողի սահմանած նշանակությանն անհամապատասխան, կամ այդ նշանակությունը փոփոխվել է նույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված կանոնների խախտմամբ, ապա նվիրաբերողը, նրա ժառանգները կամ այլ իրավահաջորդը նվիրաբերության վերացում պահանջելու իրավունք ունեն:

Հիշյալ հոդվածի 3-րդ կետում նաև նշվում է. «Նվիրաբերողի կողմից գույքի նվիրաբերությունը քաղաքացուն պետք է պայմանավորված լինի, իսկ իրավաբանական անձանց՝ կարող է պայմանավորված լինել այն որոշակի նշանակությամբ օգտագործելով: Այդպիսի պայմանի բացակայության դեպքում քաղաքացուն կատարված նվիրաբերությունը համարվում է սովորական նվիրատվություն: Մնացած դեպքերում նվիրաբերված գույքը նվիրառուն պետք է օգտագործի դրա նշանակությանը համապատասխան»:[4] Որոշակի նշանակությամբ օգտագործելը, մեր կարծիքով, չի պարունակում նվիրառուի կողմից «անխափան օգտագործման» պահանջ, մինչդեռ սա էական պայման է գույքի /ասենք՝ եթե այն բարձր տեխնիկական զգայունակությամբ օժտված էլեկտրոնային սարքավորում է/ նպատակային օգտագործման համատեքստում: Նվիրաբերության պայմանագրում նման երաշխիքի բացակայությունը, թերևս, թերի է դարձնում գործարքի բուն նպատակը:

Մեր կարծիքով՝նվիրաբերություն չի կոչվում հիվանդ մարդու բուժման համար կատարվող հանգանակությունը, երբ այն արվում է մեկ անձի շահերի համար օգտագործելու նպատակով: Հաճախ դա իրականացվում է սոցիալական ցանցերի միջոցով /facebook/ և այլն, երբ տվյալ ցանցի օգտատերեր հանդիսացող անձի կամ կազմակերպության միջոցով նվիրաբերության կոչ է արվում մյուս օգտատերերին: Սովորաբար նշվում է միայն հիվանդ անձի անուն-ազգանունը, հիվանդության անվանումը, ինչպես նաև այն բանկի տվյալները, որտեղ բացված է հանգանակության հաշվեհամարը: Այս դեպքում, սակայն, ամբողջական չի պահպանվում նվիրաբերության՝ ըստ նշանակության օգտագործելու պահանջը, քանզի պարտադիր կարգով պետք է նշվեն նաև հիվանդի բնակության վայրը, առողջապահական հիմնարկը, որտեղ կազմվել է բժշկական եզրակացությունը, և հատկապես արտասահմանյան այն բուժհիմնարկի տվյալները, որտեղ նախատեսվում է իրականացնել բուժումը: Այս դեպքում, կարծում ենք, նվիրաբե-

ությունը վերածվում է սովորական նվիրատվության, որովհետև հանգանակության մասնակիցները հնարավորություն չեն ունենում հետևելու, թե ինչ չափով է իրականացվում հանգանակված գումարի՝ ըստ նպատակի օգտագործումը:

Իբրև նվիրառուներ կարող են հանդես գալ տարբեր ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ անհատ քաղաքացիներ, առողջապահական, դաստիարակչական հիմնարկներ, սոցիալական պաշտպանության և այլ հաստատություններ, հասարակական, կրոնական կազմակերպություններ, որոնք նվիրաբերությունն ընդունելիս պետք է ունենան նվիրաբերված առարկայի որակական հատկանիշների վերաբերյալ ստույգ երաշխիքներ: Որպես ասվածի տրամաբանական հիմք կարող է դիտարկվել, մեր կարծիքով, օրենսգրքի 605-րդ հոդվածի 4-րդ կետի այն նշումը, համաձայն որի. «Նվիրաբերությունը որոշակի նպատակով օգտագործելու համար ընդունած իրավաբանական անձը պետք է վարի նվիրաբերված գույքի օգտագործման բոլոր գործառնությունների առանձնացված հաշվարկ»:[5] Մեզ վերոհիշյալ եզրակացությանը հանգելու առիթ է տալիս ենթամաստի սուբյեկտիվ մեկնաբանությունը՝ «օգտագործման բոլոր գործառնությունների» հիմնակետով: Գտնում ենք, որ հիշյալ հոդվածի 4-րդ կետում պետք է կատարվի լրացում՝ նվիրաբերված գույքի հետագա օգտագործման մասին երաշխիքի համապատասխան շեշտումով: Այս լրացման համապատկերում հոդվածի 6-րդ կետը կարծես ավելի հիմնավորված է դառնում: Իսկ 6-րդ կետի համաձայն, ինչպես արդեն նշել ենք, նվիրաբերողը, նրա ժառանգները կամ այլ իրավահաջորդը կարող են պահանջել նվիրաբերության վերացում, եթե նվիրաբերված գույքն օգտագործվել է նվիրաբերողի սահմանած նշանակությանն անհամապատասխան, կամ այդ նշանակությունը փոփոխվել է նույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված կանոնների խախտմամբ:

Հատկանշական է հոդվածի 7-րդ կետի այն սահմանումը, ըստ որի՝ նվիրաբերության նկատմամբ չի կիրառվում օրենսգրքի 604-րդ հոդվածը, որը սահմանում է իրավահաջորդության նորմը նվիրատվությունը խոստանալիս: Տվյալ հոդվածի 1-ին կետում նշվում է, որ նվիրառուի իրավունքները չեն փոխանցվում նրա ժառանգներին (իրավահաջորդներին), եթե այլ բան նախատեսված չէ նվիրատվության պայմանագրով: Իսկ 2-րդ կետով շեշտվում է, որ նվիրատվություն խոստացած նվիրատուի պարտականությունները նրա ժառանգներին (իրավահաջորդներին) են փոխանցվում, դարձյալ, եթե այլ բան նվիրատվության պայմանագրով նախատեսված չէ:

Ուշագրավ են այս համատեքստում կուսակցություններին կատարվող նվիրատվությունները: Համաձայն «Կուսակցությունների մասին» ԼՂՀ օրենքի՝ կուսակցություններն իրավունք ունեն գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների տեսքով նվիրատվություններ ստանալ ֆիզիկական և իրավաբանական անձանցից: Բացառություն են կազմում օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերը: Մասնավորապես չի թույլատրվում նվիրատվություն կատարել հետևյալ կառույցներից.

1) բարեգործական եւ կրոնական կազմակերպություններից, ինչպես նաեւ նրանց հիմնադրած կազմակերպություններից.

2) պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններից՝ բացառու-

թյամբ այդ մարմինների կողմից սույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն կատարվող ֆինանսավորման.

3) պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների հիմնարկներից ու կազմակերպություններից, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությամբ հիմնադրված կազմակերպություններից.

4) պետական կառավարչական հիմնարկներից.

5) պետական ոչ առեւտրային կազմակերպություններից.

6) նվիրատվության կատարման օրվանից մինչեւ վեց ամիս առաջ գրանցված իրավաբանական անձանցից.

7) օտարերկրյա պետություններից, օտարերկրյա քաղաքացիներից ու իրավաբանական անձանցից, ինչպես նաեւ օտարերկրյա մասնակցությամբ իրավաբանական անձանցից, եթե օտարերկրյա մասնակցի բաժնետոմսերը, բաժնեմասը տվյալ իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալում 25 տոկոսից ավելի է.

8) միջազգային կազմակերպություններից եւ միջազգային հասարակական շարժումներից.

9) անանուն անձանցից:[6]

Հոդվածի 1-8-րդ կետերում թվարկված նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստացման օրվանից երկու շաբաթվա ընթացքում դրանք վերադարձնել նվիրատուին, իսկ 9-րդ կետում նշված նվիրատվության ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է նվիրատվության ստացման օրվանից երկու շաբաթվա ընթացքում այն փոխանցել պետական բյուջե:

Նույն ձևով՝ «Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքով, թեպետ քարոզչություն կատարելու իրավունք ունեցող անձինք քարոզչությունը ֆինանսավորելու նպատակով կարող են ստեղծել քարոզչության հիմնադրամ, սակայն որոշ կառույցների դարձյալ արգելվում է հիմնադրամում մուծումներ կատարել:[7] Համաձայն 21-րդ հոդվածի՝ մուծումներ չեն կարող կատարել պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, բյուջետային հիմնարկները (կազմակերպությունները), օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք, քաղաքացիություն չունեցող անձինք, բարեգործական, կրոնական, միջազգային կազմակերպությունները և միջազգային հասարակական շարժումները, բաժնետիրական կապիտալում 30 տոկոսից ավելի օտարերկրյա բաժնեմաս ունեցող կազմակերպությունները: Ինչպես կուսակցությունների դեպքում, հիմնադրամների հաշվին դրանց մուծած գումարները փոխանցվում են պետական բյուջե:

Հանրաքվեի ժամանակ նվիրաբերության նախաձեռնությունը կարող է դրսևորվել նաև նվիրառուի կողմից: Այս դեպքում նվիրաբերություն կատարող քաղաքացին պարտավոր է գումարը մուծելիս ներկայացնել անձնագիրը, որպեսզի նշվեն վերջինիս անձնական տվյալները /անունը, ազգանունը, հայրանունը, քաղաքացիությունը, անձնագրի սերիան, համարը, բնակության հասցեն/: Իսկ իրավաբանական անձինք նվիրաբերություն կարող են կատարել միայն անկանխիկ /բանկային փոխանցման/ ձևով, ընդ որում՝ վճարման հանձնարարա-

կանի վրա պիտի պարտադիր նշվեն իրավաբանական անձի անվանումը, բանկային տվյալները, ՀՎՀՀ-ն և այլն:

Կան բարեսիրական բնույթի գործողություններ, որոնք, պարունակելով նվիրաբերության տարրեր, ուղղակիորեն չեն առնչվում այս հասկացությանը: Խոսքը տվյալ դեպքում ծեսային արարողությունների մասին է, որն արմատավորված է նաև հայկական քրիստոնեական հավատքում: Այդպիսի արարողությունների թվին է դասվում մատաղ անելը:

Մատաղ անելը երախտագիտության դրսևորում է՝ ուղղված Աստծուն, որը նպատակամղված է մարդուն չարիքիներից զերծ պահելուն: Այն զուտ կրոնական ծես է, որը կապ չունի հանրօգուտ նպատակով արվող նվիրաբերության հետ: Բացի կենդանի զոհաբերելուց, այս շրջանակում արվող ցանկացած ընծայաբերում նույնպես հանդիսանում է մատաղ, որը կարող է դրսևորվել ուտեստի, հագուստի, շինության, դրամական նվերի և որևէ այլ բարեգործության ձևով: Մատաղ անողը հաստատում է Աստծո հանդեպ իր սերն ու հավատը, իսկ այս գործողությունն ունի բացառապես անձի ներքին բավարարման նպատակ:

Նվիրաբերության տարրեր կան նաև հարսանեկան արարողությունների ժամանակ հանգանակություններ կատարելու սովորույթում, որը կարող է արտահայտվել ինչպես նյութական արժեք պարունակող առարկաների, այնպես էլ կանխիկ դրամի հանձնման տեսքով: Հարազատների ու բարեկամների կողմից, ովքեր հանդիսանում են ֆիզիկական անձինք, իրականացվող նման դրամահավաքների նպատակը հարսանքատիրոջը նյութապես օժանդակելն է, կամ էլ նորապսակներին /առավել հաճախ՝ հարսին/ թանկարժեք նվեր մատուցելը, որը ժողովրդական սովորույթով համարվում է բարետրամադրվածության նշան:

Թե՛ դրամական և թե՛ թանկարժեք ապրանքի արտահայտությամբ կատարված այսպիսի նվիրաբերությունը նույնպես միտված չէ հանրօգուտ նպատակների, չի պահանջում նվիրված առարկայի /դրամի/ ըստ նշանակության օգտագործում և չի նախատեսում պայմանագրի կնքում: Այսինքն՝ նվիրառուն իրավազորված է ինքուրույն տնօրինելու նվերը՝ առաջնորդվելով միայն բարոյական պարտավորություններով: Նույն կարգով, եթե հետագայում ամուսնությունը լուծարվել է, և ընտանիքը չի կայացել, նվիրաբերողն իրավական տեսանկյունից չի կարող ետ պահանջել նվերը: Բացառություն է, երբ նվիրաբերողը իրավաբանական անձ է, և նվիրաբերությունն էլ կատարվել է համապատասխան պայմանագրով /ինչպես ասենք՝ որևէ առևտրային կազմակերպության կողմից տվյալ կառույցի անդամ հանդիսացող ամուսնական զույգին բնակարան կամ այլ անշարժ գույք նվեր տալը/: Այս պարագայում արդեն նվերը ետ պահանջելու իրավական հիմքն ակնհայտ է դառնում:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», երկրորդ մաս, Երևանի համալսարանի հրատարակչություն, «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, էջ 124:
2. Նույն տեղում:
3. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք», ՀՀ կառավարության պաշտոնական հրատարակություն, Եր., 1998, էջ 206:
4. Տես՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», երկրորդ մաս, Երևանի համալսարանի հրատարակչություն, «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, էջ 124:
5. Նույն տեղում:
6. Տես՝ «Կուսակցությունների մասին» ԼՂՀ օրենք, www. nankr.am:
7. Տես՝ «Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենք, www.nankr.am:

РЕЗЮМЕ

Пожертвование как разновидность договора дарения

Нарине Саркисян

В чем разница между дарением и пожертвованием? В гражданском праве Республики Армения, это называется разновидностью договора дарения, что является самым лучшим определением. Необходимо также различать дарение от спонсорства. Спонсорством считаются соответствующие расходы, связанные с определёнными событиями массового характера, во время которых проводится реклама спонсора с использованием плакатов, видеороликов и других форм рекламы. Есть и другие благотворительные акты, которые содержат элементы дарения, но не связаны непосредственно с этимпонятием. В этом случае речь идет об обрядах, которые коренятсяв армянской христианской вере. К таким обрядам относится церемония жертвоприношения. Элементы пожертвования есть также в обрядах свадебных церемоний, которые могут быть выражены как предметами материального значения, также денежными средствами. Такое пожертвование, принесенное как деньгами, так и ценным товаром, не предназначено для общественно-полезных целей,нетребует использования по назначению посвященного предмета/денег/ и не предполагает заключения договора.

SUMMARY

Donation as a Type of Giving

Narine Sargsyan

What is the difference between gifts and donations? In civil rights of the Republic of Armenia, this is called variety of gift contract, which is the best definition. It is also necessary to distinguish between giving and sponsorship. Sponsorships are considered to be the costs associated with the mass events, during which advertising of the sponsor takes place with the use of posters, videos and other forms of advertising. There are other charitable acts, which contain elements of the gift, but are not directly related to this concept. In this case these are rituals that are rooted in the Armenian Christian faith. These rites include the ceremony of sacrifice.Elements of donations that are present in the wedding ceremonies can be expressed with the objects of material value as well as with the cash. This donation brought both with money and valuable commodity, not intended for public benefit purposes; does not require a particular purpose dedicated item / money / and does not imply a contract.